

ուր որ երթայ պիտի մէկ վատ անուն մի
 հանէ. եւ այնպէս չար են, որ երկու հոգի
 130 մէկ օր չկերեն կենալ հիտրաց բնաւ, ոչ
 միայն աշխարհականք, այլ եւ կարգաւորք. եւ
 յորժամ կուլին՝ ոչ միայն մի բան կամ երկու
 ասեն եւ լոեն, այլ զօրն ի բուն. այլ եւ
 տղայութեան գործն երեսն տան. եւ այնպէս
 135 նախատինք եւ զազիր խօսք եւ զբուցք եւ յի-
 շոնց տան, որ լսողքն գարչին. եւ զայն ոչ
 թէ հայի լեզուաւ, որ այլազգ չիմանայ կամ
 չհասկանայ, այլ այնպէս լեզուաւ հայհոյեն,
 որ ամէն ազգ հասկանայ: Եւ այտ կուվոյն եւ
 140 ատելութեամբն ցիր ու ցան են եղել. եւ ամէն
 ազգի աչաց ելել են¹:

Նմանապէս եւ այս աշխարհս ամէն քա-
 ղաք կերակուր, ըմպելին, տօշակ, եօռղան եւ
 այլն վեր են կալել, բայց միայն տներն եւ
 145 ժամն կայ զեռ եւս²: Եւ ասին մեզ թէ Վանա-
 տիկու չբիթալն տարին երկու երեք Փուցի
 դինի կու դար. եւ ամէն շաբաթ դային էր
 եղել հացն, միսն մինչեւ աղն եւ քացախն,
 նաեւ դրամ դային արած. իսկ Հայքն ուտէին
 150 եւ յուով գինի ըմպէին, արբենային, զի ու-
 ժով գինի է այն երկրին՝ եօթն տարեն, ինն,

150 յարբենային:

¹ Գժրախտարար այսօրուան համար ալ կ'արժէ
 հայ ուղեգրին արդար զանգատը:

² Խօսքը Հայոց եկեղեցիներու եւ հոգևտուններու
 մասին է: